Ա. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՄՈՔԱԼԱՔՆԵՐԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ և վրաց ժողովուրդների պատմական կապերը իրենց ծնունդն են առնում դեռևս հնագույն առասպելական ժամանակներից։ Լինելով դրկից երկրներ և հանդիսանալով թատերաբեմ Արևելքի և Արևմուտքի պետությունների, բարբարոս ցեղերի մշտական մենամարտերի, այդ երկրների ժողովուրդները շատ տխուր և ուրախ օրեր են տեսել, համատեղ պայքար մղել հայրենի երկրի աղատության համար, ճաշակել պարտության դառը բաժակը և հաղթանակի ոգեշունչ զգացումը։ Եվ երբ զավթիչ ասպատակների հարվածների տակ հայ ժողովուրդն ստիպված է եղել տարագրվել օտար երկրներ, հարևան Վրաստանը հանդիսացել է այն վայրերից մեկը, ուր հանգրվանել են թշնամու սրից փրկված հայ գաղթականների առավել ստվար զանգվածներ։

Սակայն նրանք պարտք չեն մնացել այն երկրին, որը նրանց հյուրընկալել էր, այլ մեծապես նպաստել են ինչպես նրա տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը, այնպես էլ ռազմունակությանը։

Հաստատվելով Վրաստանի քաղաքներում, հայերը սկսում են առաջատար դեր կատարել երկրի առևտրա-արդյունաբերական կյանքում, կազմում են, այսպես կոչված, մոքալաքների դասը։ Քաղաքի բնակիչը վրացերեն կոչվում է մոքալաքե (მოქალაქე), որը հայերեն թարգմանվում է քաղաքացի։ Սկզբում մոքալաքե էին կոչվում քաղաքներում ապրող բոլոր բնակիչները, բայց այնուհետև «մոքալաքե»-ն դառնում է մի տեսակ պատվանուն, որ տրվում էր վրաց թագավորների կողմից Թբիլիսի և Գորի քաղաքների այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքացիական հին ծագում և վճարում էին հատուկ հարկ (մախթա)։ Այսպիսով, Թբիլիսիի և Գորիի քաղաքային բնակչության մեջ առաջ է գալիս մի նոր շերտ, օժտված որոշ արտոնություններով, որի իրավունքներն արդեն արտահայտություն են գտնում Վախթանգ VI թագավորի կազմած օրենսգրքում։ Մինչև XIX դարի սկզբները մոքալաքները առավելապես հայերն էին։

Հայ պատմագրության մեջ մոքալաքների մասին խոսել են Լեոն[1], Ա. Երիցյանը[2], Դ. Անանունը[3]։ Սրանք այս հարցին անդրադարձել են այնքանով, որքանով որ հարկ է եղել՝ առնչված իրենց ընտրած թեմայի ու պատմական ժամանակաշրջանի հետ։ Այսպես, Լեոն պատմում է մոքալաքների մասին «Թիֆլիսի հայ գաղութը» բաժնում (նշված աշխատությունը), Երիցյանը՝ երբ խոսում է թիֆլիսահայերի, իսկ Անանունը՝ Վրաստանի հայերի մասին։ Անց-

---

1 Լ ե ո, Հայոց պատմության նորագույն շրջան, դասախոսություններ կարդացված համալսարանում, Երևան, 1924—1925 թթ. (ձեռագիր)։

2 Ա. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, I մաս, Թիֆլիսի հայք և նոցա վիճակագրությունը։

3 Դ. Ա ն ա ն ո ւ ն, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, I մաս։

յալի պատմաբանները տալիս են լոկ մոքալաքների պատմությունը (քանի որ նրանք հայեր էին)։ Ինչ վերաբերում է ժամանակակից հայ պատմաբաններին, ապա նրանցից ոչ մեկը չի անդրադարձել այս խնդրին։ Մինչդեռ ներկայիս վրացի պատմաբանները բավականին մեծ ուշադրություն են դարձնում մոքալաքների հարցի վրա, առանձին ուսումնասիրություններով լուսաբանում այն։ Պատմաբաններ Շ. Մեսխիան[4], Թ. Բերիաշվիլին[5], Շ. Կակուրիան[6], Մ. Սամսոնաձեն[7], տնտեսագետ Վ. Չանտլաձեն[8] իրենց աշխատություններում հանգամանորեն մեկնաբանում են մոքալաքների առաջացումը, նրանց քաղաքային կյանքում առաջնակարգ դերը, իսկ Թ. Բերիաշվիլին Թբիլիսիի բնակչության գերիշխող խավի՝ մոքալաքների սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրման հիման վրա, լուսաբանում է ֆեոդալական հարաբերությունների քայքայման, կապիտալիստական արտադրաեղանակի առաջացման, բուրժուական խավի կազմավորման պրոցեսը։ Սակայն հեղինակը չի նշում, թե ովքեր էին մոքալաքները իրենց ծագումով, ինչու էին հենց նրանց զանազան արտոնություններով օժտում վրաց թագավորները։ Բերիաշվիլին, ինչպես և Մեսխիան բերում են բազմաթիվ փաստաթղթեր մոքալաքների ու նրանց գործունեության մասին, բայց չեն նշում նրանց ազգային կազմը։ Մինչդեռ հայտնի է, որ դրանք հայեր էին։

Մոքալաքների՝ որպես քաղաքային բնակչության առանձին խավի հանդես գալը պատահական երևույթ չէր։ Այն պայմանավորված էր Վրաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությամբ, վրաց թագավորների XVII—XVIII դարերում վարած քաղաքականությամբ։

Այդ ժամանակ Վրաստանը ճորտատիրական երկիր էր, որը պահպանել էր իր թագավորությունը, բայց ոչ անկախությունը։ Վրաց թագավորը Իրանի շահի հպատակն էր, նրա վալին։ Այսպես էր մինչև XVIII դարի երկրորդ կեսը, երբ Վրաստանի թագավոր Հերակլ II-ը, օգտվելով Նադիր շահի մահից հետո Իրանում ստեղծված խառը դրությունից, Վրաստանը անկախ դարձրեց։ Բացի այդ, Հերակլ II-ը իր հոր՝ Թեյմուրազ II-ի մահից հետո (1762 թ.) միավորեց Քարթլիի և Կախեթիայի թագավորությունները։

Գոյություն ունեցող ֆեոդալական կարգերի պայմաններում բավականին ուժեղ էին առանձին ֆեոդալների կենտրոնախույս, անջատվողական տենդենցները։ Վրաց թագավորները, իրենց ազդեցությունը ուժեղացնելու համար աշխատում էին ստեղծել տնտեսական և քաղաքական հենարան։ Այդ կարևոր հենարաններից մեկը քաղաքային բնակչությունն էր։ Պատմական հանգամանքների բերումով, քաղաքային բնակչության զգալի մասը հանդիսանում էին, ինչպես արդեն նշեցինք, հայերը։

---

[4] Ш. Месхиа. Города и городской строй Грузии XVII—XVIII вв., Тбилиси, 1959.

[5] თ. ბერიაშვილი, რეფორმამდელი ხანის საქართველოს ქალაქების სოციალური ფენები (მოქალაქეები). თბილისი, 1964 წ.

[6] Ш. Какурия. Население Тбилиси (1803—1959 гг.). Автореферат, Тбилиси, 1965.

[7] მ. სამსონაძე, თბილისის სამრეწველო განვითარება XIX საუკუნის რეფორმამდელ სანაში, თბილისი, 1964 წ.

[8] В. Чантладзе. Финансы в дореформенной Вост. Грузии (1801—1864). Тбилиси, 1956.

Դեռևս V դ. Վախթանգ Գորգասար վրաց թագավորը Թիֆլիսը, որը դարձրել էր իր մայրաքաղաքը, բնակեցնում է հայերով։ Դավիթ Շինարարը XII դարում կառուցում է Դորի քաղաքը՝ բազում վանքերով և եկեղեցիներով[9] հատկապես հայ գաղթականների համար։ Ռոստոմ թագավորը 1650 թ. Բայանդուր հայ իշխանին է հանձնում «իշխանություն մեծ Տփխիս քաղաքին»[10], իսկ 1714 թ. թագավորական հրովարտակով իշխան Բեհբությանը ստանում է Թիֆլիսի մելիքի պաշտոնը, որը այնուհետև ժառանգական է դառնում այդ տոհմի համար[11]։ Իսկ երբ զանազան արհավիրքների (ժանտախտ, լեզգիների և պարսիկների բարբարոս ներխուժումներ) պատճառով պակասում էր Թիֆլիսի կամ, ընդհանրապես, Վրաստանի բնակչությունը, վրաց թագավորները աշխատում էին պակասը լրացնել հայերով, երբեմն բռնի, երբեմն՝ հրավերով։ Այդպես էր Հերակլ II-ը, որը պարսիկների դեմ իր մի քանի արշավանքների ժամանակ մեծ թվով հայեր է բերում և բնակեցնում իր երկրում ու մայրաքաղաքում, կամ էլ Թիֆլիս էր հրավիրում Հայաստանի ու Պարսկաստանի հայ խոշոր վաճառականներին, շնորհելով նրանց զանազան արտոնություններ։ Թարխան Աղամալովը Վրաստան էր եկել Հերակլի հրավերով և իր հարստության շնորհիվ իսկույն մեծ դիրք էր գրավել նրա արքունիքում[12]։ Իսկ երբ նա լքեց Վրաստանը և բնակություն հաստատեց Աստրախանում՝ Հերակլ II-ը դիվանագիտական երկար գրագրություն սկսեց ռուսական արքունիքի հետ, փորձելով ինչ գնով լինի ետ վերադարձնել հայ մեծահարուստին։ Այդ կապակցությամբ Հերակլը դիմեց նաև Սիմեոն կաթողիկոսի հեղինակավոր միջնորդությանը։ Բայց նրա բոլոր ճիգերն ապարդյուն անցան։ Այս օրինակը ցույց է տալիս, թե որքան մեծ նշանակություն էին տալիս վրաց արքաները առևտրական դասին, որին նրանք ուզում էին հենարան դարձնել ոչ միայն խոշոր ֆեոդալների կենտրոնախույս ձգտումները ի չիք դարձնելու, այլև երկրի տնտեսական զարգացումը առաջ մղելու գործում։ Իսկ Վրաստանում տիրող ֆեոդալական համապարփակ հասարակարգի պայմաններում ֆեոդալական կապանքներից ազատ մոքալաքների դասն էր ի վիճակի ուժ հաղորդելու վրաց թագավորների այդ ձգտումներին։

Սկզբում մոքալաք էին դառնում արքունիքի հետ կապված հայ խոշոր վաճառականներն ու արհեստավորները, իսկ XVIII դարում «միայն թագավորի կամքով» սկզբունքով մոքալաք կարող էին դառնալ թագավորի մոտ ծառայության մեջ գտնվող ցածր խավի բոլոր մարդիկ։ Դրանցից հայտնի են «Խարազ (մաշիկ կարող) Փարսադանը, դասաբ (մսագործ) Բաղդասարը, թվանքչի (զինագործ) Թամազը, սառաջ (թամբագործ) Պապան, դարազ (կաշեգործ) Սերմազանը, դերձակ Շաքարը և այլք։ Սրանք բոլորը քաղաքի (Թիֆլիսի—Ա. Պ.) թագավորական ծուխի մարդիկ էին և տեղացիներ (Թիֆլիսեցիներ—Ա. Պ.), ու վճարում էին 4000 ռուբ. մախթա»[13]։ ხარაზი ფარსადანა. ყასაბი ბაღდასარა, მეთოფე თამაზა, სარაჯი პაპა, დაბაღი შერმაზანა, მკერვალი შაქარა

9 Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, Երուսաղեմ, 1869, էջ 47—48։

10 Զաքարեայ Սարկաւագի պատմութիւն, հ. 2, Վաղարշապատ, 1870, էջ 98։

11 Ա. Երիցյան, Թիֆլիսի հայք եւ նոցա վիճակագրութիւնը, «Փորձ», 1879։

12 Վ. Դիլոյան, էջեր Ռուսաստանի հայ վաճառականական կապիտալի պատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, 1962, էջ 74։

13 თ. ბერიაშვილი, რეფორმამდელი ხანის საქართველოს ქალაქების სოციალური შენები, თბილისი, 1964 წ., էջ 30։

და სხვა. ყველა ესენი იყვნენ „სახასო კომლი ქალაქის დავთრისა, რომელნიც აქაურნი არიან და აძლევენ 4000 მან. მახთას საკუთრად).

*Մոքալաք անունն էին կրում նույնպես թագավորի երաժիշտները—Շավթուխով և Դավիթ Հախվերդով, դրոշակակիրը—Զալոն-Բաբանոսով, փողհարը, դպիր Մանանովը և ուրիշներ, որոնք ազատված էին պետական հարկերից և թագավորից ոռճիկ էին ստանում։ Որ վրաց թագավորները մեծ տեղ էին տալիս մոքալաքներին իրենց կառավարության մեջ, ցույց են տալիս և հետևյալ փաստերը։ Վախթանգ VI մոտ նազիրի պաշտոնը վարում էր մոքալաք Հովսեփ Փիթոյանը (Զուրաբյանը)։ Երբ 1760 թ. Թեյմուրազ թագավորը գնում էր Ռուսաստան, նրա շքախմբում կային երեք մոքալաքներ՝ խոշոր վաճառականներ Գեորգի Բաղդադովը, Նազար Եգորովը և Մելքոն Դավիդովը* (купец и кредитор)[14]։

*Հերակլ II հանձնարարությամբ մոքալաք Ամիրովը կատարում էր զանազան կարգի դիվանագիտական հանձնարարություններ։ (Ընդհանրապես, Հերակլի արքունիքում պաշտոնները մեծ մասամբ վարում էին հայերը։ Այսպես՝ դիվաններ (քարտուղար) էին լինում Թումանյանները, թարգմանիչներ՝ Ենիկոլոփյանները, զառնշանջիներ՝ (երկաթյա և պողպատյա զրահների վրա ոսկեգիր քանդակող կամ դրվագներ գրող) Բերուտյանները, մելիքները և մինիշկարբաշիներ՝ Բեհրությանները, արքունիքի ախոռապետներ՝ Ղորդանյանները և այլն)։ Իսկ Գեորգի XII թագավորը ավելի հեռուն գնաց։ Երբ նրա հրամանով թագաժառանգներ Ալեքսանդրից, Յուլոնից և Փառնաոզից խլվեցին նրանց ինչքն ու կայքը, ապա նրանց պատկանող որոշ գյուղացիներ դասվեցին պետական քաղաքացիների շարքը և ընդգրկվեցին մախթա վճարողների թվի մեջ, այն նպատակով, որպեսզի ավելացվի մոքալաքների թիվը, որը 1795 թ. Աղա Մահմեդ խանի կողմից Թիֆլիսի ավերումից և գերեվարությունից հետո խիստ պակասել էր*[15]։ *Բացի այդ, նույն վրաց թագավորների մտցրած իրավական նորմերի համաձայն, եթե պետական գյուղացին տեղափոխվում էր Թիֆլիս, կամ մեկ ուրիշը գալիս էր արտասահմանից ու մտնում պետական ծառայության մեջ և ցանկություն հայտնում դառնալու մոքալաք, կարող էր գրանցվել նրանց ցուցակի մեջ և համարվել մոքալաք*[16]։

*Մոքալաքների իրավունքների մասին կարդում ենք Վախթանգ VI թագավորի կազմած օրենսգրքում։ 30, 31, 32, 33 հոդվածները սահմանում են, որ II կարգի ազնվականի արյան գնի չափով որոշվում է հարուստ վաճառականինը—մոքալաքինը, իսկ III կարգի ազնվականի արյան համար վճարում են 480 ռուբ., նույնքան և II կարգի վաճառականի արյան համար*[17]։ *Ուրեմն, մոքալաքները, ինչպես և ազնվականները Վրաստանում բաժանված էին կարգերի՝ առաջին, երկրորդ, երրորդ կարգի և այլ կարգի մոքալաքներ, որոնք իրենց իրավունքների մեջ, ինչպես ցույց է տալիս օրենսգիրքը, հավասարեցված էին ազնվականներին։ Առաջին կարգի մոքալաքի սպանության դեպքում նրա արյունը գնահատվում էր երկրորդ կարգի ազնվականի արյան գնի չափով, երկրորդ կարգի մոքալաքինը՝ երրորդ կարգի ազնվականի արյան գնով և այլն։*

*Մոքալաքների կարգը որոշվում էր ընտանիքի, տոհմի հնությամբ, անշարժ կայքի և կապիտալի մեծությամբ։ Եթե մոքալաքներից որևէ մեկը ինչ-ինչ*

[14] Архив внешней политики России, ф. «Гл. арх. 2—8», д. 8, л. 15.

[15] Акты Кавказской археографической комиссии, т. VI, ч. I, стр. 11.

[16] Там же, т. XI, стр. 685.

[17] Сборник законов Грузинского царя Вахтанга VI. Тифлис, 1827.

պատճառներով զրկվում էր իր ունեցվածքից, նման դեպքում նա չէր կորցնում իր կոչումը, այլ, օրինակի համար, 1-ին կարգից կարող էր անցնել 2-րդ կարգ, 2-ից՝ 3-րդ և այլն։ Մոքալաքի մահից հետո նրա որդին և թոռը, մինչև չափահաս դառնալը, կրում էին ընտանեկան պատվանունը։ Բայց եթե մոքալաքը դժբախտություն էր ունենում հեռացվելու մոքալաքների մատյանից, ապա նա զրկվում էր մոքալաք պատվանունից[18]։ Մոքալաքները իրավունք ունեին գնել գյուղացիներ և դառնալ ճորտատեր։ Եթե մոքալաքը կատարեր սպանություն, ապա այդ հանցանքի համար նա մահապատժի չէր ենթարկվում։ Մոքալաքները ազատված էին մի ահավոր տուրքից՝ արրաբից։ Վրաստանը Պարսկաստանի տիրակալության դաժան ժամանակներում հարկադրված էր տարեկան հարկ տալ պարսից շահերին՝ տղաներով և աղջիկներով. մոքալաքները ազատվում էին այդ ծանրությունից՝ փոխարենը վճարելով փրկագին։

Չնայած որ մոքալաքները վարում էին պետական պաշտոններ, զբաղվում արհեստներով, այնուամենայնիվ նրանց հիմնական զբաղմունքը մնում էր առևտուրը, որը և հնարավորություն էր տալիս նրանց դառնալու հարուստ դրամատերեր։

Մոքալաքները, բացի իրենց շնորհված արտոնություններից և իրավունքներից, ունեին նաև պարտականություններ թագավորի հանդեպ։ Նրանք պարտավոր էին վճարել իրենց հատուկ հարկը՝ մախթան, տարեկան 4000 ռուբլի։ Հերակլ II քարտուղարի (դիվանի) կազմած ցուցակից երևում է, որ XVIII դ. վերջին 4000 ռ. մախթա վճարել են 556 տուն մոքալաքներ[19]։

Մոքալաքները վճարում էին և մալի, որը հավաքվում էր ընդհանրապես Թիֆլիսի բոլոր բնակիչներից, ամուսնացած տղամարդուց 1 ռ. 20 կ., իսկ ամուրիից՝ 60 կոպ., մասրապ հարկ, որը վճարում էին ընդհանրապես քաղաքների բնակիչները[20]։ Բացի այս բոլորից, թագավորը դրամի խիստ կարիքի դեպքում դրամաժողով էր անցկացնում մոքալաքների մեջ։

Մոքալաքները, համքարների նման, միավորված էին մի միության մեջ (общество), որը գործում էր որոշ սկզբունքներով.

1. Մոքալաքները ունեին իրենց միջից ընտրված դատավորներ, որոնք վճռում էին քաղաքացիական վեճերը իրենց դասի անդամների միջև։ Այդպիսի դատաստանական ինքնավարություն գոյություն ուներ և յուրաքանչյուր համքարության մեջ։

2. Համքարների վրա հարկերն ու տուրքերը բաժանելու և հավաքելու համար, յուրաքանչյուր տարի քվեարկությամբ ընտրվում էին երեք մոքալաքներ, ընտրվում էին նաև 5—12 հոգի, որոնք պետք է ստուգեին և հաստատեին բաշխման կարգը, ըստ որի կատարվում էր հարկահավաքը[21]։

3. Նացվալների (полицмейстер) միջոցով սակագին էին նշանակում կենսամթերքների վրա[22]։ Հարկահավաք մոքալաքները գործում էին համքարությունների գլխավորների՝ «ուստաբաշիների» հետ։ Այս բոլորին կառավարում էր մելիքը, որի իրավասությանն էր ենթարկվում ոչ միայն Թիֆլիսը, այլև նրա շրջակայքը։

---

18 Там же, т. XI, стр. 685.
19 Там же, т. VI, ч. I, стр. 9.
20 Там же, стр. 13.
21 Там же, стр. 11.
22 Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, стр. 10.

Բավական մեծ իշխանություն և պարտականություններ ուներ մելիքը՝ առևտուրը պահել բարեկարգ վիճակում, հետևել չափի ու կշռի ճշտությանը, առևտրի արդարությանը՝ առանց խաբելու և կեղծելու։ Մելիքը պետք է հետևեր այն բանին, որպեսզի առևտրականները բավարարվեին չափավոր հաստույթով, վեճեր չբանային և չվիրավորեին միմյանց։ Երբ վաճառականների և քաղաքացիների միջև առաջանում էին կալվածքային կամ ժառանգական դատավեճեր, առևտրական հաշիվներ, մուրհակային հարցեր և այլ քաղաքացիական գործեր, մելիքը հրավիրում էր անվանի վաճառականներին, հարցերը լուծում էր գրավոր դատավճռով, որը հաստատում էր իր և դատաքննությանը մասնակցողների կնիքով։ Պակաս կարևորություն ունեցող գործերի քննությունն ու վճիռը մելիքը կարող էր հանձնարարել երկու կամ ավելի պատվավոր քաղաքացիների, որոնք վայելում էին համընդհանուր հարգանք»[23]։

Մեծ արտոնություններ ուներ մելիքը վրաց թագավորների ժամանակ։ Օրինակ. Վրաստանում անշարժ կալվածքների վաճառման և գնման թղթերը ու կալվածագրերը վավերացված էին համարվում, երբ նրանց վրա դրվում էր թագավորի կնիքը։ Բացառություն կազմում էին միայն Թիֆլիսի անշարժ կալվածքները, որոնց վաճառման և գնման թղթերի վավերականության համար բավական չէր միայն թագավորի կնիքը, այլ պետք է լիներ նաև հայ մելիքի կնիքը։ Այս արտոնությունը հասկանալի է, գրում է Լեոն, քանի որ Թիֆլիսի անշարժ կալվածքները գլխավորապես հայերին էին պատկանում։ Այս փաստը դալիս է ապացուցելու նաև, որ մելիքն իր իշխանությամբ մարմնացնում էր Վրաստանի մայրաքաղաքի հայության ինքնավարության սկզբունքները[24]։

Մելիքի պաշտոնը ժառանգական էր, որ վարում էին Բեհբության տոհմի ներկայացուցիչները սկսած 1714 թ. մինչև Վրաստանի Ռուսաստանին միանալը, երբ մելիքի պաշտոնը նույնացվեց ոստիկանապետի պաշտոնի հետ։ Սակայն Ռուսաստանին միանալուց հետո էլ Բեհբությանները վայելում էին նույն իշխանությունն ու արտոնությունները։

Մելիքի պաշտոնի կողքին մենք գտնում ենք նաև մամասախլիսի (տանուտեր) պաշտոնը, որի գործունեության շրջանակները, սակայն, այնքան էլ պարզ չեն։ Ս. Եղիազարովը գտնում է, որ մամասախլիսը նույն մելիքն է, մելիք բառի վրացական տառադարձումը։ Սակայն եթե մենք նույնիսկ ընդունելու լինենք նման բացատրությունը, ապա անհասկանալի է դառնում այդ երկու տիտղոսների միաժամանակյա գործածությունը։ Այնուհետև, ինչպես հայտնի է, XVIII դ. մամասախլիսի պաշտոնը միացվեց մելիքի պաշտոնին և երկուսն էլ հանձնարարվեց Բեհբություններին։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ դրանք տարբեր պաշտոններ էին։

Մեր կարծիքով, մամասախլիսի իրավասության տակ Վրաստանի հայության ավելի լայն շրջանակներ էին մտնում, քան մելիքի, որը ինչպես նշել ենք, իրավասու էր Թիֆլիսի վրա։

Բացի պետական մոքալաքներից, կային մոքալաքներ, որոնք պատկանում էին եկեղեցուն։ Ինչպես վրաց թագավորների օրոք, այնպես էլ ռուսական տիրապետության ժամանակ, եկեղեցական մոքալաքները զբաղվում էին առևտրով, օգտվում էին նույն այն իրավունքներից, ինչ պետական մոքալաք-

---

23 В. Е. Романовский. Очерки из истории Грузии. Тифлис. 1902, стр. 415.

24 Լեո, Հայ ժողովրդի պատմության նորագույն շրջան, I մաս (դասախոսություններ) ձեռագրի իրավունքով, Երևան, 1926—28, էջ 173։

ները։ Նրանք ազատ էին յուրովի տնօրինելու իրենց ինչպես ժառանգական, այնպես էլ օրինավոր կերպով ձեռք բերված (գնված, նվիրած) սեփականությունը։ Այս մոքալաքների կախվածությունը եկեղեցուց արտահայտվում էր այն բանով, որ նրանք պարտավոր էին որոշ հարկ տալ եկեղեցուն՝ մոմով և դրամով։ Միևնույն ժամանակ և նրանք հարկ էին տալիս պետությանը, ինչպես պետական մոքալաքները[25]։

* * *

Վրաստանում ռուսական կառավարության հաստատումը տարբեր հասարակական խավերի մեջ տարբեր ռեակցիա առաջացրեց։ Եթե ռուսական կառավարությունից դժգոհ խոշոր ֆեոդալների մի մասը գնաց Ալեքսանդր արքայորդու ետևից, ապա հասարակական մյուս խավերը ջանում էին հարմարվել նոր իրադրությանը, և ոչ միայն նրա համար, որպեսզի պահպանեն վրացական թագավորների օրոք ունեցած իրենց առանձնաշնորհումներն ու արտոնությունները, այլև ձեռք բերեն իրավունքներ և արտոնություններ, որոնք հատուկ էին մետրոպոլիային։

Այսպես օրինակ, Ղազախի, Բորչալուի, Շամշադինի և մյուս շրջանների աղալարները ճգնում էին օժտել իրենց ճորտատիրական իրավունքներով և ճանաչել տալ դրանք, մինչդեռ նրանք բնավ նման իրավունքներ չէին ունեցել և հանդիսացել էին որպես սոսկ պետական պաշտոնյաներ, կառավարելով այս կամ այն շրջանն ու գյուղը և որպես պաշտոնավարձ ստանալով տվյալ վայրի եկամուտների համապատասխան մասը։

Բոլորովին այլ դիրք էին գրավել մեզ հետաքրքրող մոքալաքները։ Նրանք ոչ միայն չէին ուզում փոխել իրենց իրավիճակը, այլև ռուսական տիրապետության հաստատումից անմիջապես հետո հարց էին բարձրացնում, որպեսզի վրաց արքաներից նրանց շնորհված իրավունքները մնան անձեռնմխելի։ Այդ հիշեցնում է Ռուսաստանի հայկական գաղթավայրերը, որոնք հենց հիշյալ ժամանակաշրջանում պայքար էին մղում ցարական կառավարության կողմից նրանց ունիֆիկացիայի ենթարկելու փորձերի դեմ։

Ինչպես արդեն նշեցինք, իր տիրապետության հենց սկզբից ցարական Ռուսաստանը փորձեց անցկացնել Վրաստանում կառավարման իր սկզբունքները։ Սակայն հանդիպելով շատ խոշընդոտների և դիմադրության, ցարական պաշտոնյաներն սկսեցին խորանալ նորանվաճ երկրի բարքերի ու կենցաղի մեջ, ծանոթանալ և ուսումնասիրել այն։ Կազմվում էին զանազան հանձնաժողովներ՝ տարբեր խնդիրներ հետաքննելու համար։ Այսպես, 1814 թ. ապրիլին կազմվում է մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր մոքալաքների դրությունը և պարզություն մտցներ դրա մեջ։

Դեռևս կառավարչապետ Կնորրինգի օրոք մոքալաքները հարց էին բարձրացրել վրաց թագավորների կողմից իրենց շնորհված արտոնությունները պահպանելու համար։ 1804 թ. սկզբներին մոքալաքները նորից են հարց բարձրացնում, որպեսզի իրենց թույլ տրվի ընտրելու ներկայացուցիչներ քաղաքացիների ներքին գործերը կառավարելու համար։ Նույն թվականի ապրիլի 12-ին տեղական ռուսական կառավարությունը ներկայացնում է 9 «ընտրյալ մոքալաքներիս» ցուցակ, որոնց ընտրել էին 100 մոքալաքներ։ Այդ ցուցակում

25 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 28, վավ. 158։

կային հետևյալ անձինք՝ Հովսեփ Քեթխուդով, Եսայի Փիթոյան, Հովսեփ Քարթվելիշվիլի, Դավիթ Դարթվելիշվիլի, Մկրտիչ Տեր-Ասատուրով, Աղա Շիով, Աբել Շադինով, Ենոք Խախուտով և Շաքար Մադինով։ Սրանք ընտրվել էին մեկ տարի ժամանակով, միայն մախթա հավաքելու համար։

1809 թ. բարձրագույն հրամանի համաձայն, Թիֆլիսի առաջնակարգ մոքալաքները աղատվում էին մարմնական պատժից (Վախթանգ VI օրենսգրքի հիման վրա)։ Այս առիթով, հարց է ծագում, թե ով պետք է դասվեր առաջնակարգ մոքալաքների շարքը։ Դրա համար է, որ հավաքվում է 1814 թ. հանձնաժողովը՝ բաղկացած 10 հոգուց։ Դրանք էին՝ իշխան-ազնվականներ՝ Փալավանդովը, Դարչի Բեբությանը, Դմիտրի Օրբելիանին, Զուրաբ Մելիքովը և Շաղուբաթովը, մոքալաքներ՝ Հովսեփ Թաղոև, Եսայի Փիթոև, Մկրտում Մինթոև, Բեժան Բաստամով և Միքայել Սառաջև։

Հանձնաժողովը երկու տարի աշխատելուց հետո ներկայացնում է իր տվյալներն ու եզրակացությունները։ Պարզվում է, որ մինչև XIX դ. մոքալաքները դատվել են ըստ իրենց կարգային պատկանելության։ Մինչև Ռուսաստանին միանալը Վրաստանում եղել է 241 մոքալաքական ընտանիք, որոնցից 53-ը առաջին կարգի, 91-ը՝ 2-րդ կարգի, 97-ը՝ 3-րդ կարգի, և 4 ընտանիք էլ եկեղեցական մոքալաքներ։ Սակայն այս դասակարգման դեմ է դուրս գալիս հենց հանձնաժողովի անդամ Սառաջևը, առարկելով, որ ճիշտ չէ որոշված 1-ին կարգի մոքալաքների թիվը։ Նրա բողոքների հիման վրա 1817 թ. սեպտեմբերի 17-ին կրկին հանձնաժողով է հավաքվում, որը նոր ցուցակ է ներկայացնում, ըստ որի 1-ին կարգի մոքալաքական ընտանիքների քանակը ավելանում է 19-ով, իսկ եկեղեցական մոքալաքներինը՝ չորսից դառնում է յոթ։ Բայց այս նոր ցուցակը չի ընդունվում ընդհանուր ժողովի կողմից, որը հրաման է տալիս ուժի մեջ թողնել 1816 թ. հուլիսի 31-ին կազմած ցուցակը. (այսինքն՝ առաջինը)։

Սակայն թե առաջին հանձնաժողովի կազմած ցուցակը, թե երկրորդ հանձնաժողովինը, ճանաչում չեն գտնում։ Կուսակալ Ա. Երմոլովը հանձնարարում է նոր հանձնաժողով կազմել Դարչի Բեհբությանի նախագահությամբ և հարցին վերջնական լուծում տալ։ 1818 թ. փետրվարի 20-ին հանձնաժողովը ներկայացնում է մի նոր ցուցակ, որտեղ 1-ին կարգի մոքալաքների ընտանիքների թիվը 49 էր, և որոնց հարստությունը 50000 ռուբլուց ավելի էր։ Բայց այս հանձնաժողովն էլ հարցը չի լուծում։ Մոքալաքների խնդիրը այդպես է մնում է առկախ ամբողջ մինչև Ֆորմյան շրջանը։

Ինչու էր ցարական կառավարությունը այդքան ուշադրություն դարձնում մոքալաքների վրա։

Ինչպես հայտնի է, դեռևս XVII դարի 2-րդ կեսից առևտուրը Արևելքի հետ Ռուսաստանի համար սկսում է կենսական նշանակություն ստանալ։ Վրաստանի միացմամբ լավագույն հնարավորություններն էին ստեղծվում Ռուսաստանի արևելյան առևտրի զարգացման համար։ Այդ իսկ պատճառով Վրաստանի առևտրական դասը, որ դեռ վաղուց անտի սերտ առևտրական կապեր էր հաստատել ինչպես Պարսկաստանի, այնպես էլ Թուրքիայի և մյուս արևելյան երկրների հետ, արժանանում է ռուսական կառավարության հատուկ ուշադրությանը, որպես արևելյան առևտրի հենակետերի և այն իրացնողի՝ կայսրության հարավում։

Երբ հարց է առաջանում Վրաստանի առևտրականներին բաժանել գիլդիաների (ռուսական հիմունքներով), Կովկասի կուսակալ Ա. Երմոլովը դեմ է դուրս գալիս դրան։ Իր 1821 թ. մարտի 26-ի կառավարիչ Սենատին հղած զեկուցագրում նա ասում է, որ ռուսական օրինակով գիլդիաների հաստատումը Վրաստանում ոչ միայն փոքր ի շատե օգուտ չի բերի պետությանը, այլ, ընդհակառակը, կարող է խիստ վնասել առևտրի ընդարձակմանը և նեղել բնակիչներին, քանի որ հնուց ի վեր Վրաստանի առևտրականներից ոչ մեկին արգելված չի եղել երբևէ գնալ արտասահման կամ էլ Ռուսաստանի քաղաքները իր առևտրական գործերով, և դրանից է, որ այժմ, չնայած ճանապարհային մեծ դժվարություններին, հնարավոր է կենսամթերքներ ձեռք բերել չափավոր գներով։ Եթե արտասահմանյան և ռուսական առևտրի իրավունքը տրվի միայն առաջին և երկրորդ կարգի մոքալաքներին, դա նշանակում է՝ ամբողջ առևտուրը տալ խիստ փոքրաթիվ մարդկանց ձեռքը, որովհետև բոլոր առևտրականներից հազիվ թե երկուսից հինգ ընտանիք ի վիճակի լինի գրվելու առաջին կարգի մոքալաք։ Դրա համար Երմոլովը առաջարկում է առևտուրը Վրաստանում թողնել իր նախկին հիմքերի վրա։ Բայց նա անհրաժեշտ է համարում մի այլ բան. որ հարկավոր է խրախուսել շատ մոքալաքների դառնալու առաջին կամ երկրորդ կարգի։ Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է Թիֆլիսի և Վրաստանի այլ վայրերի առևտրականներին բաժանել չորս աստիճանի։ Միայն Թիֆլիսում, քանի որ մյուս քաղաքներում առևտուրն այնքան էլ զարգացած չէ և մոքալաքներ էլ չկան, հիմնադրել քաղաքային դուման։ Ով ցանկություն կհայտնի գրվելու մոքալաք (թեկուզ ընտանյոք հանդերձ) պետք է դիմի դումային։ Վերջինս պետք է թույլատրի, որ յուրաքանչյուր կարգի համար դիմող մոքալաք վճարի դումային համապատասխան գումար, ինչպես օրինակ, առաջին կարգի համար՝ 200 ռուբլի, երկրորդ կարգի համար՝ 100 ռ., երրորդի համար՝ 25 ռ., իսկ չորրորդ կարգի մոքալաքներից յուրաքանչյուր տղամարդ տարեկան պետք է վճարեր 1 ռ. 50 կ.։

Այս կերպ գրանցված մոքալաքներին շնորհել հետևյալ արտոնությունները՝ առաջին կարգի մոքալաքներին տալ բացարձակ իրավունք հիմնադրելու գործարաններ ու ֆաբրիկաներ, երկրորդ կարգի մոքալաքներին թույլ տալ զբաղվել կապալառությամբ, երրորդ կարգի մոքալաքներին իրավունք տալ զբաղվելու առևտրով, ինչպես առաջին երկուսին, և Վրաստանում, և Ռուսաստանում, և արտասահմանում։ Բացի այդ, թույլ տալ նրանց կրելու զինվորական նպարավաճառների պարտականությունները։ Հանցագործության դեպքում դատել նրանց ոչ արտոնվածների պես, չազատել մարմնական պատժից։ Իսկ 4-րդ կարգի մոքալաքներին թույլ տալ զբաղվել առևտրով և տնայնագործությամբ միայն Վրաստանում, և ոչ մի այլ արտոնություն։ Բոլոր այն մոքալաքներին, որոնք վճարում են 4000 ռուբ. մախթա, եթե որոշակի ժամկետում ցանկություն չհայտնեն գրանցվելու որևէ կարգի մեջ, հարկադրել չորրորդ կարգի համար նախատեսվածով, և մախթան վերացնել։ Իսկ ոչ մի կարգի մոքալաք չգրանցված մարդկանց թույլ չտալ զբաղվել առևտրով, բացի իշխաններից և ազնվականներից, որոնք եթե ցանկություն հայտնեն առևտրով զբաղվելու, ապա նրանց գրանցել միայն որպես առաջին կամ երկրորդ կարգի մոքալաքներ[26]։

---

26 «Акты...», т. XI, стр. 687.

Թեպետ Ս. Երմոլովի այս առաջարկությունները, ըստ որոնց ապահովվում էր լայնատարած և շահավետ առևտուր հայերի միջոցով, օրենքի ուժ չեն ստանում, այնուամենայնիվ մասնավոր կիրառում են գտնում։ Հենց Երմոլովի ժամանակ մոքալաք Սառաջևը հիմնում է խոշոր կաշեգործարան[27]։

1826—1829 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակաշրջանում շատ մոքալաքներ սկսում են զբաղվել կապալառությամբ։ Ռուսական զորահրամանատարությունը նրանց էր հանձնում աճուրդով թե զորքերին մթերք մատակարարելը, և թե տնտեսական այլ պահանջներ։ Ինչպես գրում է Ա. Երիցյանը «հայ փոդրաթչիները շատ նշանավոր ծառայություններ մատուցեցին ռուսական զորքին ու ոմանք պատվանշաններով պարգևատրվեցան»[28]։

Մինչ այդ էլ էր ռուսական կառավարությունը զանազան պարգևներ շնորհում մոքալաքներին՝ նրանց դեպի կայսրությունը ունեցած լավ վերաբերմունքի և օգնության համար։ 1813 թ. գեներալ Ռտիշչևը միջնորդում է, ի թիվս այլոց, Թիֆլիսի հայտնի մոքալաք Դավիթ Սառաջևին նահանգական քարտուղարի աստիճան տալ, նկատի ունենալով նրա խոշոր ծառայությունները ռուսներին։ Սառաջևն առաջինն էր, որ առևտրական ուղի հարթեց Մոսկվայից Թիֆլիս կովկասյան դժվարանցանելի լեռների վրայով, և նրա օրինակին հետևեցին շատերը։ Վրաստանում պարենի, հատկապես հացի սակավության ժամանակ նա կարողանում է ձեռք բերել փթերով հաց, որով մեծապես օգնում է կառավարությանը կասեցնելու ժողովրդի դժգոհությունը։ Թիֆլիսում հաճախ մոլեգնող համաճարակներից բնակիչներին փրկելու համար, Սառաջևը իր սեփական միջոցներով կառուցում է հիվանդանոց և այլն[29]։

Նման օրինակներ կարելի է շատ բերել։ Սակայն ներկա հոդվածի շրջանակները մեզ այդ հնարավորությունը չեն տալիս։ Ուստի ամփոփենք։

1. Մոքալաքների խավը ֆեոդալական Վրաստանի պայմաններում առաջացած մի առանձնահատուկ երևույթ էր, որը, որոշ իմաստով, հանդիսանում էր կապիտալիստական հասարակարգի սաղմերի կրողը։ Ազատ ավատական կապանքներից և վայելելով խոշոր ֆեոդալների կենտրոնախույս ձգտումների դեմ պայքարող և կենտրոնացված ուժեղ իշխանություն ստեղծել ցանկացող վրաց արքաների հովանավորությունը և օրենքի պաշտպանությունը մոքալաքների խավը խոշոր դեր էր խաղում Վրաստանի ներքին և արտաքին առևտրի, ինչպես նաև արդյունագործության զարգացման մեջ։ Վրաստանի Ռուսաստանին միանալուց հետո էլ, մոքալաքները շարունակում էին մեծ դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում։ Ռուսական տեղական իշխանությունների հովանավորողական քաղաքականությունը առևտրի զարգացման համար ընդառաջ գնաց մոքալաքների տնտեսական շահերին և հնարավորություններ ստեղծեց նրանց համար առևտրական գործունեության ոլորտից անցնելու արդյունաբերական ոլորտը, այդպիսով հանդիսանալով կապիտալիստական հարաբերությունների զարգացման առաջամարտիկները Վրաստանում։

2. Այստեղ պետք է ասել, որ մոքալաքների ինստիտուտի բազայի վրա վեր հառնելով նորելուկ հայ կապիտալիստները, շնորհիվ իրենց կապիտալնե-

---

27 Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, стр. 18.

28 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 443—444։

29 Архив внешней политики России, ф. «Гл. арх. 1—18», д. 7, л. 17 об.

*րի, նսեմացնում էին վրաց ազնվականների փքուն սնապարծությունը։ Այս հանգամանքը ծնունդ էր տալու հայ և վրացի վերնախավերի ազգային հակամարտությանը XIX դարի երկրորդ կեսին։*

*3. Մոքալաքների ինստիտուտի գոյությունը ինքնին վկայում է հայերի և վրացիների տնտեսական ու քաղաքական սերտ կապերի առկայությունը և հանդիսանում է դրանց իսկ արտահայտությունը։ Իրավական ուժ տալով մոքալաքների արտոնություններին, որոշ իմաստով հավասարեցնելով նրանց վրաց ազնվականներին՝ Վախթանգ VI ելնում էր իր երկրի տնտեսական ու քաղաքական շահերից։*

А. А. ПЕТРОСЯН

## ЗНАЧЕНИЕ МОКАЛАКЕ В АРМЯНО-ГРУЗИНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ И ЭКОНОМИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ

### Резюме

В статье рассматривается вопрос о возникновении нового привилегированного слоя городского населения Грузии — мокалаке. Мокалаке формируются еще в XVII в. в основном из переселившихся из Армении и поселившихся в Тбилиси и Гори армян, которые составили значительную часть городского населения.

Первоначально мокалаками назывались все горожане, но впоследствии название это становится каким-то почетным званием, которое присуждалось людям, наделенным привилегиями и правами, дарованными грузинскими царями. Звание мокалаке имели право носить те, которые были коренными горожанами и платили особую подать — махту. Мокалаке, которые являлись в основном ремесленниками и купцами, играли большую роль в производственной и торговой жизни Грузии и составляли основную массу горожан—налогоплательщиков.

Политика наделения мокалаке привилегиями преследовала цель не только экономического усиления городов, но и еще большего привлечения армян-купцов в Грузию. Это свидетельствует о стремлении правящих кругов укрепить контакт между армянами и грузинами для развития экономической жизни страны.